ՔՐԻՍՏԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԵՄԱՐԿԱՑԻԱՅԻ ՊՐՈԲԼԵՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՄԱՆՈՒԻԼ ԿԱՆՏԻ ԵՎ ԿԱՐԼ ՊՈՊԵՐԻ ՄՈՏ

Իմացաբանության կարևորագույն պրոբլեմներից է դեմարկացիան: Նշված պրոբլեմը վերլուծության է ենթարկվել փիլիսոփայության երկու հսկաների՝ Իմանուիլ Կանտի և Կարլ Պոպերի տեսանկյուններից, քանի որ այն համարվում է և Կանտի, և Պոպերի ճանաչողության տեսության կենտրոնական պրոբլեմը: Վերլուծության արդյունքում փորձ է արվել ցույց տալ պրոբլեմի զարգացման հիմնական փուլերը:

Դեմարկացիայի պրոբլեմը կարելի է ձևակերպել հետևյալ հարցադրումների միջոցով, որի հետ, կարծում ենք, կհամաձայնեին և Կանտը, և Պոպերը:

Ինչպե՞ս տարանջատել գիտական գիտելիքը ոչ-գիտական գիտելիքից,

կամ ե՞րբ կարելի է գիտելիքը համարել գիտական:

Արդյոք գոյություն ունե՞ն գիտականության չափանիշներ:

Կանտի մոտ այս պրոբլեմը վերաբերում է գիտության և մետաֆիզիկայի տարանջատմանը: Հարկ է նշել, որ Կանտի մոտ մետաֆիզիկա և փիլիսոփայություն տերմինները դիտվում են հոմանիշներ:

Ինչու՞ է Կանտի մոտ առաջանում այս խնդիրը: Պատճառը, թերևս, այն հանգամանքն է, որ Կանտի կարծիքով մետաֆիզիկան, սկսած Լայբնիցից և Վոլֆից, չի արել որևէ արժեքավոր քայլ ճանաչողության պրոցեսում, որով կարելի է պնդել նրա գոյության արդարացվածության մասին[1]:

Երբ ցանկանում ենք իբրև գիտություն ներկայացնել որևէ իմացություն, ապա հարկավոր է նախ հստակ որոշարկել այն տարբերակիչ հատկանիշները, որոնք զատում են նրան ամեն այլ իմացությունից, և որոնք, հետևաբար, հատուկ են միայն նրան[2]: Հակառակ դեպքում իմացությունների սահմանները կխառնվեն, և դրանք հնարավոր չէ քննել՝ ելնելով իրենց բնույթից:

---

[1] Տես՝, И. Кант. Соч. в 6-и томах, том 6, М.: "Мысль", 1966, с. 240:
[2] Տես՝, И. Кант, Соч. в 6-и томах, том 4, часть 1, М.: "Мысль", 1965, с. 79:

Կանտը քննադատում է նախորդ մետաֆիզիկական տեսությունները, որոնք ցանկանում էին սեփական սպեկուլյատիվ մեթոդներով ուսումնասիրել օբյեկտիվ իրականությունը: Ստացվում է, որ բանականությունը կարող է առանց փորձի ճանաչել օբյեկտիվ աշխարհը: Ըստ Կանտի, այդ ուսմունքներն ընկնում են հակասության մեջ, որն անխուսափելի է: Մասնավորապես լուրջ հակասություններ էին առաջացել Նյուտոնի ֆիզիկայի, որի ճշմարտացիությունն ու բացարձակությունը չէր կարող կասկածի տակ դրվել Կանտի կողմից, և Լայբնիցի մետաֆիզիկայի միջև: Անհրաժեշտ էր որևէ սահման դնել ժամանակի բացարձակ ճշմարիտ տեսության և մետաֆիզիկայի միջև:

Կանտի կարծիքով որպեսզի իմացությունը լինի գիտական, անհրաժեշտ է, որ այն հիմնված լինի ապրիորի-սինթետիկ դատողությունների վրա: Այդպիսի ապրիորի-սինթետիկ իմացություններ են զուտ մաթեմատիկան և զուտ բնագիտությունը, քանզի երկուսն էլ պարունակում են դրույթներ, որոնք մասամբ ապրիորի են, մասամբ՝ փորձնական[3]:

Այն հարցին, թե ինչպե՞ս է հնարավոր զուտ մաթեմատիկան, Կանտը պատասխանում է զգայականության ապրիորի ձևերի տարածության և ժամանակի միջոցով: Սուբյեկտը իրերը զգայում է տարածության և ժամանակի մեջ, դա ճիշտ է, սակայն ճանաչողության համար անհրաժեշտ է, որպեսզի զգայված առարկաները և նրանց հարաբերությունները նաև մտածվեն: Եվ այստեղ զուտ մաթեմատիկայի հնարավորության հարցին հաջորդում է բնագիտության հնարավորության հարցը: Բնագիտությունը հիմնված է դատողականության ապրիորի հիմնադրույթների վրա[4]: Բնության մեջ գոյություն ունեն պատճառ-հետևանքային կապեր, որոնք ինքին ընկալման առարկա չեն կարող լինել: Այդ կապերը, իհարկե, մեզ համար գոյություն ունեն օբյեկտիվորեն, բայց այնքան ժամանակ, քանի դեռ փորձը կրկնում է դրանք: Պնդել, որ դրանք անհրաժեշտաբար կկրկնվեն նաև ապագայում, հնարավոր կլինի միայն այն պայմանում, երբ ցույց տրվի, որ, պահպանելով իրենց սինթետիկ բնույթը, դրանք կարող են լինել նաև ապրիորի:

Փաստորեն որպեսզի գիտելիքը լինի գիտական, այն պետք է հիմնված լինի ապրիորի-սինթետիկ սկզբունքների վրա: Անհրաժեշտ է, որ լինի ապրիորի, որպեսզի ապահովի գիտելիքի անհրաժեշտությունը և համընդհան-

---

[3]Տես, И. Кант, Соч. в 6-и томах, том 4, часть 1, М.: "Мысль", 1965, с.90:
[4] Տես, И. Кант. Соч. в 6-и томах, том 3, М.: "Мысль", 1964, с.116:

ությունը, և միևնույն ժամանակ անհրաժեշտ է, որ լինի սինթետիկ, որպեսզի ընդլայնի մեր իմացության սահմանները:

Մետաֆիզիկան, Կանտի կարծիքով, չի կարող լինել էմպիրիկ, քանի որ այն գործ ունի բանականության այնպիսի զուտ հասկացությունների հետ, որոնք երբևէ չեն գտնվում ոչ մի հնարավոր փորձում, այսինքն՝ այդ հասկացությունների ճշմարտացիությունը և կեղծությունը հնարավոր չէ հաստատել փորձի միջոցով[5]:

Մետաֆիզիկայի և գիտության մյուս տարբերությունը նրանում է, որ գիտությունը ճանաչում է ֆենոմենների (երևույթների) աշխարհը կամ բնությունը: Այս դեպքում բնության տակ պետք է հասկանալ փորձում տրված առարկաների ամբողջությունը: Գիտությունը կարող է գործ ունենալ միայն ֆենոմենների աշխարհի հետ, քանի որ ինքնին իրերը, որոնց բնույթը մենք կցանկանայինք ճանաչել այն դեպքում, երբ դրանք փորձի առարկաներ չեն կարող լինել, կստիպեին մեզ հանգել հասկացությունների, որոնց նշանակությունը չի կարող տրված լինել in concreto (իբրև հնարավոր փորձի որևէ օրինակ): Այդ ինքնին իրերի բնույթի մասին մենք պետք է կազմեինք այնպիսի հասկացություններ, որոնց ռեալությունը, այսինքն՝ արդյոք դրանք իսկապես վերաբերում են առարկաներին, թե սոսկ մտացածին բաներ են, բոլորովին անհնար կլիներ որոշել: Մի բանի իմացություն, որը չի կարող լինել փորձի առարկա, գերֆիզիկական է[6]: Գիտական իմացության դեպքում մենք բոլորովին գործ չունենք այդպիսի իրերի ուսումնասիրության հետ, այլև՝ բնության իմացության հետ, որի ռեալությունը կարող է հաստատվել փորձով, չնայած որ այդ իմացությունը հնարավոր է ապրիորի և տրամաբանորեն նախորդում է ամեն փորձի: Փաստորեն, ըստ Կանտի, գիտական իմացությունը սահմանափակվում է միայն ֆենոմենի աշխարհի ճանաչողությամբ, և բոլոր այն փիլիսոփաները, որոնք հավակնում են որևէ գիտելիք ունենալ ինքնին իրերի մասին, համարվում են շառլատաններ: Նրանց կարծիքով մարդկային բանականությունը կարող է իսկապես ճանաչել օբյեկտիվ իրականությունը, և մետաֆիզիկան հենց այն միակ անհրաժեշտ ոլորտն է, որը կարող է հասնել այդ նպատակին:

Այն հարցին, թե արդյոք Լայբնիցի և Վոլֆի մետաֆիզիկան կարող լինել գիտական, Կանտը բացասական է պատասխանում:

Դեմարկացիոն գիծ անցկացնելով գիտության և մետաֆիզիկայի միջև՝ միևնույն ժամանակ Կանտը հարց է դնում.

---

[5]Տես , И. Кант. Соч. в 6-и томах, том 4, часть 1, М.: "Мысль", 1965, с.148:
[6]Տես , И. Кант. Соч. в 6-и томах, том 4, часть 1, М.: "Мысль", 1965, с.113:

Արդյոք հնարավո՞ր է գիտական մետաֆիզիկա (փիլիսոփայություն), և եթե հնարավոր է, ապա՝ ինչպե՞ս:

Նախկին մետաֆիզիկան, իբրև բանականության բնական հակվածություն, իրական է, սակայն այն դիալեկտիկական է և խաբուսիկ: Դրա մասին են վկայում «Պրոլեգոմենեներում» Կանտի կողմից արծարծված զուտ բանականության կիրառումից առաջացած հոգեբանական գաղափարը, որը հանգում է զուտ բանականության պարալոգիզմի, տիեզերաբանական գաղափարը, որը խորտակվում է անտինոմիաներում իսկ աստվածաբանական գաղափարը լուծվում է զուտ բանականության իդեալի մեջ: Այնպես, որ բանականությունից հիմնադրույթներ փոխառել ցանկանալը կարող է առաջ բերել ոչ թե գիտություն, այլ սոսկ դատարկ դիալեկտիկական արվեստ, որով մի դպրոցը կարող է գերազանցել մյուսին, բայց երբևէ չի կարող օրինական և տևական հավանության արժանանալ: Ցանկացած կեղծ արվեստ, ցանկացած փուչ իմաստություն, ըստ Կանտի, ունի իր ժամանակը, քանի որ ի վերջո այն քայքայում է ինքն իրեն: Մետաֆիզիկայի համար այդ ժամանակն այժմ եկել է, և դա է ապացուցում այն վիճակը, որում հայտնվել է այն[7]:

Փաստորեն երբ մետաֆիզիկան հավակնում է սեփական սպեկուլյատիվ մեթոդներով ճանաչել ինքնին իրերի աշխարհը, ընդ որում ամբողջությամբ, ընկնում է մոլորությունների մեջ: Կանտի համար անթույլատրելի է մետաֆիզիկայի նման կիրառությունը:

Հարց է առաջանում, թե ինչո՞վ պետք է զբաղվի մետաֆիզիկան, որպեսզի լինի գիտական, ո՞րն է գիտական մետաֆիզիկայի ուսումնասիրության ոլորտը: Կանտի կարծիքով ապագա գիտական մետաֆիզիկան պետք է լինի ուսմունք ֆենոմենների աշխարհի մասին մեր ունեցած գիտելիքի հնարավորության, ապրիորի ձևերի, գիտելիքի հիմնավորման մեթոդների մասին: Այսինքն՝ Կանտը հույս ուներ, որ մենք կարող ենք ունենալ գիտական իմացաբանություն:

Այն հարցին, թե արդյոք մետաֆիզիկան երբևէ կարո՞ղ է ունենալ գիտական կիրառում, Կանտը դրական է պատասխանում: Նա տարբերակում է մետաֆիզիկայի կիրառման երկու եղանակ՝ ռեգուլյատիվ և կոնստիտուտիվ: Բանականության կոնստիտուտիվ կիրառությունը Կանտի մոտ քննադատվում է: Բաժանելով մետաֆիզիկայի առարկան ավանդական երեք բաժինների՝ ռացիոնալ հոգեբանություն, ռացիոնալ տիեզերաբանություն և ռացիոնալ աստվածաբանություն՝ Կանտը քննարկում է դրանց խնդրո առարկան: Նրա կողմից ընդունվում է երեք գաղափար, որոնց ճանաչելիությունն էլ հենց

[7] Տես, И. Кант. Соч. в 6-и томах, том 4, часть 1, М.: "Мысль", 1965, с.191:

կազմում է մետաֆիզիկայի պահանջը: Այդ գաղափարներն են հոգին, աշխարհը և Աստվածը: Այս երեք գաղափարներն էլ սկզբից եթե փորձի սահմաններից դուրս են գալիս, քանզի փորձում անվերջի գաղափարը տրված լինել չի կարող: Կարծես թե մնում է մեկ ճանապարհ՝ որ բանականությունն ինքը կարող է հայել այդ առարկաները: Սակայն Կանտը հայեցողության այդ ձևը (ինտելեկտուալ ինտուիցիա) չի ընդունում: Հետևաբար, մենք պետք է հրաժարվենք այդ գաղափարներն առարկայացնելու պահանջից: Այսինքն՝ չպետք է գաղափարը ճանաչել իբրև որոշակի տրված մի բան: Պետք է բավարարվել գաղափարի մասին պատկերացում ունենալու հանգամանքով: Մետաֆիզիկան չպետք է պնդի, թե ինչպիսին են իրականում աշխարհը, հոգին և Աստված, քանի որ վերջինները երբեք չեն կարող տրված լինել: Այսինքն՝ պետք է հրաժարվել բանականության կոնստիտուտիվ կիրառումից:

Նախորդ մետաֆիզիկան բանականության կիրառությունը համարել է հենց կոնստիտուտիվ և երևակայել է, թե կարող է այդ գաղափարների օգնությամբ ընդլայնել գիտելիքը և անցնել ամեն հնարավոր փորձի սահմանները: Ըստ Կանտի, մետաֆիզիկան կարող է ունենալ գիտական կիրառում միայն ռեգուլյատիվ իմաստով: Բանականության գաղափարների կոչումը դատողականության կիրառության սիստեմատիկ միասնության սկզբունքն է[8]: Բանականությունն ունի ճանաչողական նշանակություն այն իմաստով, որ այն պետք է կարգավորի դատողականության հասկացությունները: Տիեզերաբանական գաղափարներ, ըստ Կանտի, ոչ թե կոնստիտուտիվ, այսինքն՝ փորձի օբյեկտները պայմանավորող, այլ ռեգուլյատիվ, այսինքն՝ ճանաչողությունն ուղղորդող սկզբունքներ են, որոնք ձգտում են փորձը ներկայացնել բացարձակ սահմանների մեջ:

Այսպիսով՝ Կանտը հստակ տարանջատում է ոչ-գիտական գիտելիքը՝ մետաֆիզիկան, գիտական գիտելիքից՝ բնագիտությունից դատողականության ապրիորի հասկացությունների և հիմնադրույթների միջոցով: Քննադատելով նախորդ մետաֆիզիկան և դուրս նետելով այնտեղից փիլիսոփայական այն ուսմունքները, որոնք հավակնում են ճանաչել նոումենի աշխարհը՝ Կանտը կարծում է, որ գիտական կարող է լինել միայն այն մետաֆիզիկան, որը կզբաղվի ֆենոմենների աշխարհի մասին գիտելիքի հնարավորության, հիմնավորման սկզբունքների և մեթոդների հարցերով:

Նշեցինք, որ Պոպերի իմացաբանական պրոբլեմատիկայում ևս կարևորագույն տեղ է զբաղեցնում դեմարկացիայի պրոբլեմը: Մինչև դեմար-

---

[8] Տես , И. Кант. Соч. в 6-и томах, том 4, часть 1, М.: "Мысль", 1965, с.173:

կացիայի պրոբլեմի լուծման պոպերյան տարբերակը քննարկելը, ցույց տանք, թե արդյո՞ք Պոպերը կհամաձայներ Կանտի լուծման հետ:

Պոպերի համար ևս խնդիրն այն է, թե ինչպես տանջատել գիտական գիտելիքը ոչ-գիտական գիտելիքից, մի տարբերությամբ միայն, որ Պոպերի մոտ մետաֆիզիկայի տարանջատումը գիտությունից այնքան էլ խիստ չէ, ինչպես Կանտի մոտ: Սակայն, եթե ենթադրենք, որ Պոպերն, այնուամենայնիվ, կընդուներ այդ բաժանումը, ապա նա արդյոք կընդունե՞ր կանտյան դեմարկացիայի չափանիշները: Հիշենք, որ այդ ճափանիշներից մեկն այն է, որ գիտական գիտելիքը պետք է սահմանափակվի ֆենոմենների աշխարհի ուսումնասիրությամբ, և եթե փորձենք որևէ գիտելիք ունենալ ինքնին իրերի մասին, ապա այն կլինի ոչ-գիտական: Մետաֆիզիկայի այն հատվածը՝ գոյաբանությունը, որ փորձում է ճանաչել ինքնին իրերը, Կանտի տեսակետից ոչ-գիտական է: Առհասարակ, Կանտի համար՝ գոյաբանական հարցադրումները գոյություն չունեն, քանի որ դրանք հարցեր են ինքնին իրերի մասին, իսկ Կանտի ուսմունքում ինքնին իրերը սկզբունքորեն անճանաչելի են: Այն որ գիտական գիտելիքը պետք է սահմանափակվի միայն մեզ տրված աշխարհի ուսումնասիրությամբ և ոչինչ չպետք է ասի օբյեկտիվ իրականության մասին, Պոպերի համար անընդունելի է: Նա չի ընդունում կանտյան աշխարհների բաժանումը, քանի որ քննադատական ռեալիզմի կողմնակից է, ըստ որի մեր գիտելիքը վերաբերում է օբյեկտիվ իրականությանը, բայց ոչ բացարձակ իմաստով: Այն փոփոխական է և ժամանակի ընթացքում կարող է հերքվել: Գոյաբանության և գիտության խիստ տարբերակումը հետևաբար անընդունելի է, քանի որ նրանցից յուրաքանչյուրը փորձում է ուսումնասիրել օբյեկտիվ իրականությունը:

Պոպերը նաև չէր ընդունի կանտյան ապրիորի-սինթետիկ հիմնադրույթները, որոնց միջոցով Կանտը փորձում էր դեմարկացիոն գիծ անցկացնել մետաֆիզիկայի և գիտության միջև: Նա մասամբ կհամաձայներ միայն Կանտի այն պահանջի հետ, որ եթե գիտելիքը գիտական է, ապա այն անպայման պետք է հիմնված լինի փորձի վրա: Սակայն փորձը Պոպերի և Կանտի համար տարբեր կիրառություն ուներ: Պոպերի համար գիտական գիտելիքը պետք է ունենա էմպիրիկ բովանդակություն, որպեսզի մեր գիտելիքը սկզբունքորեն լինի ստուգելի:

Պոպերի համար դեմարկացիայի պրոբլեմը չի սահմանափակվում մետաֆիզիկայի և գիտության տարանջատմամբ, քանի որ նրա մոտ այլ են գիտականության չափանիշները: Ըստ Պոպերի, կարելի է դեմարկացիոն գիծ անցկացնել վերոնշյալ ոլորտներից յուրաքանչյուրի մեջ: Հետևաբար, կարելի է ձևակերպել երկու առանձին հարցեր:

1. Ինչպե՞ս տարանջատել գիտական տեսությունը ոչ-գիտական տեսություններից մասնավոր գիտություններում:
2. Ինչպե՞ս տարանջատել գիտական կոնցեպցիաները (ուսմունքները) ոչ-գիտական կոնցեպցիաներից (ուսմունքներից) :

Ինչ վերաբերում է առաջին հարցադրմանը, ապա կարող է հարց առաջանալ, թե ինչու՞ Կանտի մոտ դեմարկացիայի պրոբլեմն այսպես չէր ձևակերպված: Պատասխանը միանշանակ է. Կանտի ժամանակաշրջանում չկային նույն ոլորտին վերաբերող մրցակցող տեսություններ, որպեսզի անհրաժեշտություն առաջանար տարանջատել գիտական տեսությունները ոչ-գիտական տեսություններից: Կանտի համար գոյություն ուներ ֆենոմենների աշխարհն ուսումնասիրող մեկ ֆիզիկա՝ նյուտոնյան մեխանիկա, որը բացարձակ ճշմարիտ տեսություն էր: Եվ երբ Կանտն ասում էր բնագիտություն,նա հիմնականում նկատի ուներ Նյուտոնի մեխանիկան, և ոչ մի գիտնականի մտքով չէր անցնի հարցնել, թե արդյո՞ք Նյուտոնի տեսությունը գիտական է, կամ ինչպե՞ս այն տարանջատել ոչ-գիտական տեսություններից9: Իրադրությունը փոխվում է 20-րդ դարում, երբ միևնույն ժամանակ կարող էին գոյություն ունենալ օբյեկտիվ իրականությունն ուսումնասիրող մրցակցող տեսություններ: Հասկանալի է, որ նման պայմաններում անհրաժեշտություն է առաջանում այդ տեսություններից ընտրել գիտական տեսությունները և դեն նետել ոչ-գիտական տեսությունները:

Երկրորդ հարցադրումը գուցե կարելի է տեսնել Կանտի մոտ, քանի որ նա ևս ոչ բացահայտ ձևով փորձում էր մետաֆիզիկայում տարանաջատել գիտական կոնցեպցիաները ոչ-գիտականներից: Փիլիսոփայական այն ուսմունքները, որոնք ձգտում էին գիտելիք ունենալ նոումենի մասին, համարվում էին ոչ գիտական, և գիտական կարող էր լինել այն փիլիսոփայությունը, որը պետք է ուսումնասիրեր ճանաչողության հիմնավորման հարցերը: Այս հարցում նշեցինք, որ Պոպերը չի համաձայնվի Կանտի հետ, քանի որ նրա համար գոյաբանությունը բոլորովին էլ անհիմաստ ու անթույլատրելի չէ:

Պոպերի համար և գիտական տեսությունների, և գիտական կոնցեպցիաների տարանջատման համար գոյություն ունի համընդհանուր չափանիշ՝ ֆալսիֆիկացիայի սկզբունք[9]: Սա նշանակում է, որ գիտական տեսությունները և փիլիսոփայական ուսմունքները պետք է ունենան այնպիսի տրամաբանական կառուցվածք, որը թույլ կտա վիճել այդ տեսության կամ ուսմունքի հետ, ենթարկել քննադատության և սկզբունքորեն հերքել: Ընդունելով այս

---

[9] Տես , К.Поппер. Логика научного исследования. М.: "Республика", 2005, с. 38:

չափանիշը՝ Պոպերը քննադատում է մի շարք փիլիսոփայական ուսմունքներ, այդ թվում՝ Հեգելի փիլիսոփայությունը, մասնավորապես դիալեկտիկան:

Դիալեկտիկան հեգելյան իմաստով տեսություն է, որի համաձայն մարդկային մտածողությունը ամբողջանում է այսպես կոչված դիալեկտիկական եռյակի(տրիադայի)՝ թեզի, հակաթեզի և սինթեզի միասնության արդյունքում: Սկզբում առաջանում է որևէ նոր իդեա, տեսություն, այսինքն՝ թեզը, այնուհետև պարզվում է, որ բնության կամ մտածողության մեջ գոյություն ունի առաջադրված թեզի հակառակ կողմը՝ հակաթեզը: Թեզի և հակաթեզի պայքարը տեղի է ունենում այնքան ժամանակ, քանի դեռ չի գտնվում այնպիսի մի լուծում, որը, դուրս գալով թեզի և հակաթեզի սահմաններից, միևնույն ժամանակ պահպանում է և թեզի, և հակաթեզի հատկությունները: Այդ լուծումը համարվում է դիալեկտիկական քայլ և կոչվում է սինթեզ, որն արդեն նոր որակ է, և կարող է մեկ այլ հանգամանքում հանդես գալ որպես թեզ: Դիալեկտիկական տրամաբանությունը հակասում է արիստոտելյան տրամաբանությանը, քանի որ չի ընդունում հակասության օրենքը, որի համաձայն երկու իրար հակասող դրույթներ չեն կարող միևնույն ժամանակ ճշմարիտ լինել:

Որպեսզի տեսությունը կամ ուսմունքը լինի գիտական, այն սկզբունքորեն տրամաբանական կառույցի տեսանկյունից պետք է լինի հերքելի, սակայն դիալեկտիկական տրամաբանությունը վրա հիմնված տեսությունը կամ ուսմունքը սկզբունքորեն հնարավոր չէ ենթարկել ֆալսիֆիկացիայի, քանի որ լինել ֆալսիֆիկացնելի, նշանակում է լինել քննադատելի, ընդ որում քննադատությունը կարող է լինել երկու ձևի

1. էմպիրիկ քննադատություն, երբ տեսությունը հանդիպում է իրեն հակասող փաստի

2. տեսական քննադատություն, երբ տեսությունը հանդիպում է իրեն հակասող այլ տեսության կամ ցույց է տրվում, որ տվյալ տեսությունը հակասում է ինքն իրեն:

Այն ուսմունքները, որոնք հիմնված են դիալեկտիկական տրամաբանության վրա, թույլ են տալիս, որ երկու հակասող դրույթներ միաժամանակ գոյություն ունենան: Այն փաստը, որ կարող են գոյություն ունենալ տեսություն և դրան հակասող մեկ այլ տեսություն, Պոպերը կընդուներ, քանի որ միայն այդ կերպ կարելի է անցկացնել դեմարկացիոն գիծ տեսությունների միջև: Սակայն Պոպերը չէր համաձայնի այն հանգամանքի հետ, որ այդ երկու տեսություններն էլ կարող են միաժամանակ ճշմարիտ լինել, և դրանց սինթեզի արդյունքում կստացվի նոր տեսություն: Ըստ Պոպերի, թեզի և հակաթեզի կամ տեսության և նրան հակասող մեկ այլ տեսության պայքարի արդյունքում պետք է պահպանել

նրանցից միայն մեկը: Հեգելի դիալեկտիկական ուսմունքը չի կարող լինել գիտական, քանի որ այն սկզբունքորեն ֆալսիֆիկացնելի չէ:

Դեմարկացիայի հիմնախնդիրը մասնավոր գիտություններում այն էր, թե ինչպե՞ս տարանջատել գիտական տեսությունները ոչ-գիտական տեսություններից: Պոպերը լուծում է այս խնդիրը՝ առաջարկելով հետևյալ չափանիշները՝ ֆալսիֆիկացնելիություն, ստուգելիություն, և էմպիրիկ բովանդակության առկայություն:

Քանի որ մենք գործ ունենք գիտական տեսությունների հետ, ապա ֆալսիֆիկացիայի սկզբունքն այստեղ ավելի խիստ է՝ ձևակերպված: Եթե փիլիսոփայական կոնցեպցիաներից կարելի է պահանջել, որ նրանք անպայման լինեն ֆալսիֆիկացնելի, ապա գիտական տեսությունները պետք է նաև ենթարկվեն ֆալիսիֆիկացիայի, այսինքն՝ այդ տեսությունները պետք է հնարավոր լինի փաստով հերքել[10]: Ասվածն ամրապնդելու համար կարելի է բերել Պոպերի հայտնի օրինակը. դատողությունը, ըստ որի վաղը այստեղ անձրև կգա կամ չի գա, չի կարելի համարել ֆալսիֆիկացնելի հենց այն պատճառով, որ այն փորձով հերքել հնարավոր չէ, իսկ այն դատողությունը, որ վաղը այստեղ անձրև կգա, էմպիրիկ է և ֆալսիֆիկացնելի: Եթե որևէ տեսություն փորձում է ամեն ինչ բացատրել և թույլ է տալիս բոլոր հնարավոր պնդումները, չի սահմանափակում իմացության սահմանները, ապա այդ տեսությունը ֆալսիֆիկացնելի չէ և խոսում ոչ թե տեսության ուժեղության, այլ թուլության մասին[11]: Օրինակ՝ մենք ունենք երեք տեսություններ. առաջին տեսությունը պնդում է, որ ձեռքից բաց թողնված քարը կամ կընկնի գետնին կամ՝ ոչ: Պարզ է, որ նմանատիպ տեսությունը չի կարող լինել գիտական, քանի որ այն ոչինչ չի սահմանափակում և հերքելի չէ: Երկրորդ տեսությունը պնդում է, որ բաց թողնված քարը կընկնի գետնին: Այդ դեպքում մենք արդեն գործ ունենք բովանդակային դատողության հետ, քանի որ ամեն ինչ չի ենթադրվում: Չի ենթադրվում, որ քարը կբարձրանա վերև: Այս տեսությունն արդեն իսկ բացառում է տրամաբանորեն հնարավոր որոշ դեպքեր: Երրորդ տեսության համաձայն՝ բաց թողնված քարն ընկնում է երկրի վրա (g) արագացմամբ: Եթե երկրորդ տեսությունը պնդում է, որ քարը կարող է ընկնել միայն երկրի վրա, ապա երրորդ տեսությունը պնդում է, որ քարը կարող է ընկնել երկրի վրա միայն (g) արագացմամբ: Երրորդ տեսությունն ավելի բովանդակային է, քանի որ սահմանափակում է հնարավոր շատ դեպքեր՝ տալով ավելի խորը բացատրություն երևույթին: Հետևաբար, որքան տեսու-

---

[10] Տես՝, Կ.Պոպեր. Логика научного исследования. М.: "Республика", 2005, с 89:
[11] Տես՝, К. Поппер. Предположения и опровержения. М.: "АСТ", 2004, с. 68:

թյունը բովանդակային է, այնքան մեծանում է այդ տեսությունը ֆալսիֆիկացնելու հնարավորությունը:

Որպեսզի ֆալսիֆիկացիայի սկզբունքը լինի դեմարկացիայի չափանիշ, անհրաժեշտ է, որ գոյություն ունենա էմպիրիկ բովանդակություն: Այսինքն՝ պետք է ունենա այնպիսի եզակի էմպիրիկ դատողություններ, որոնք պետք է լինեն ֆալսիֆիկացիայի նախապայման: Դրանք այն դատողություններն են, որոնց միջոցով հնարավոր կլինի հերքել տեսությունը: Միևնույն ժամանակ, ըստ Պոպերի, հնարավոր չէ ունենալ մաքուր, բացարձակ ճշմարիտ փաստեր, քանի որ յուրաքանչյուր էմպիրիկ փաստ ստացվում է մեկ այլ տեսությունից: Փաստորեն, ոչ թե փաստն է հերքում տեսությունը, այլ այն տեսությունը, որից ստացվել է այդ փաստը: Ըստ Պոպերի, որպեսզի տեսությունը ենթարկվի ֆալսիֆիկացիայի, նախօրոք, մինչ տեսության հերքումը, պետք է կայացնել մեթոդաբանական որոշում, թե հատկապես որ տեսություններից ստացված փաստերն իրավունք ունեն հերքելու առաջ քաշված տեսությունը[12]:

Գիտականության մյուս չափանիշը ստուգելիությունն է: Տեսության ստուգելիությունը համարվում է տեսության հերքման նախադրյալ: Պոպերը քննադատում է աստղագիտությունը հենց այն պատճառով, որ այն սկզբունքորեն ստուգելի չէ:

Այսպիսով վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ դեմարկացիայի պրոբլեմի բովանդակությունը նույնն է Կանտը և Պոպերի մոտ, քանի որ նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր տարանջատել գիտական գիտելիքը ոչ -գիտական գիտելիքից: Սակայն նրանք տարբեր կերպ են կատարում այդ տարանջատումը: Կանտի հիմնական խնդիրն էր տարանջատել մետաֆիզիկան գիտությունից, իսկ Պոպերը փորձում է դեմարկացիոն գիծ անցկացնել և փիլիսոփայություն մեջ՝ տարանջատելով գիտական փիլիսոփայական ուսմունքները ոչ-գիտական փիլիսոփայական ուսմունքներից, և մասնավոր գիտություններում՝ տարանջատելով գիտական տեսությունները ոչ-գիտական տեսություններից: Տարբեր են նաև նրանց կողմից առաջարկված գիտականության չափանիշները: Կանտը տարանջատում է մետաֆիզիկան գիտությունից դատողականության ապրիորի-սինթետիկ սկզբունքների միջոցով: Պոպերը, չհամաձայնելով Կանտի առաջարկած չափանիշների հետ, գտնում է, որ գիտական գիտելիքը պետք է լինի ֆալսիֆիկացնելի, սկզբունքորեն ստուգելի և անհրաժեշտ է որպեսզի այն ունենա էմպիրիկ բովանդակություն:

---

[12] Տես, К.Поппер. Логика научного исследования. М.: "Республика", 2005, с 50-51: